Ի՞նչ հետևանքներ ունի պատերազմն. — Այսպիսի օրագիրն հրատարակեց այս մեռելս, ըստ հաշուոց Պ. Անժելի հռչակաւոր վիճակագրին, թէ ինչ ինամեներ յառաջ բերին վերջին 35 տարուան պատերազմներն, թէ մարդիկներու և թէ դրամոյ նկատմամբ։ Տաւրիոյ (Խրիմու) պատերազմին մէջ (1853 թուականին), 750,000 մարդիկ մեռան և կորուստ եղաւ 7,960,000,000 մարք[1]։ Իտալիոյ պատերազմին մէջ (1859 թ.) 45,000 մարդ և 1,200,000,000 մարք. Ֆանիմարքայի պատերազմին մէջ, 3,000 մարդ, և 140,000,000 մարք — Ի պատերազմին Բաժանման (de la Sécession) 1861 էն մինչև 1865 — Հիւսիսային նահանգք 280,000 մարդ և 1,800,000,000 մարք։ Հարաւային նահանգք, 520,000 մարդ, և 9,200,000 մարք — Պագովայի պատերազմին մէջ, 43,000 մարդ և 1,320,000,000 մարք — Մեքսիքոյի և Գոչինչինայի արշաւանաց մէջ, 65,000 մարդ և 800,000,000 մարք։ — Գաղղիոյ և Բրուսիոյ պատերազմին մէջ (1870–71 թ.) 215,000, մարդ և 12,000,000,000 մարք։ Պուլղարաց և Սերպիացւոց ապստամբութեան մէջ 25,000 մարդ և 700,000 000 մարք — Ֆանկաց և Ռուսաց պատերազմին մէջ 250,000 մարդ և 4,500,000,000 մարք։ — Հարաւային Ամերիկոյ պատերազմաց մէջ 30,000 մարդ և 35,000,000 մարք։ — Աֆղանիստանի պատերազմին մէջ 250,000 մարդ և 53,000,000 մարք։ — Համագումարն է 2,253,000 մարդ, և 56,708,000,000 մարք։

Պակաս հարկ է գիտել, որ այս մեռնող անձանց հաշուին մէջ բովանդակուած չէ այն ամէն զինուորաց կամ մարդիկներուն թիւն, որոնք թէպէտ պատերազմէ դուրս մեռեր են, սակայն անոր աղետալի հետևանքներէն, կամ վիրաւորուելով պատերազմաց մէջ և կամ չափազանց նեղութիւն և վաստակ կրելով։

«ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՐ»

Կը հաղորդեն մեզ Փարիզէն, թէ քաղաքին քաջածանօթ ազգայնոյ Մ. Թոթվանեանի, Պարսից թագաւորին գործակատարին որդին՝ Արշակ Թոթվանեան, նախկին աշակերտ Մ. Ռափայելեան վարժարանին յամն 1881–1883, ուսումնաւարտ Փարիզու Գեղարուեստից դպրոցին (école des Beaux-Arts), եւ սիրելագոյն աշակերտ Jérome հռչակաւոր նկարչին, որ անդամ է Գաղղիոյ ճեմարանին, ստացաւ այս օրերս Պարսից Շահէն՝ Ալիւճի եւ Առեւու շքադիր պատուանշանն։

Ինքնեւտանամեայ պատկերահանս ընծայած է Շահին՝ 'ի Փարիզ եկած ժամանակն Աշխարհահանդիսին առթիւ, 'ի 11 Օգոստոսի 1889, նորա մեծադիր պատկերն իւղանկար մի մէջը մեծութեամբ, ներկայացնելով զՇահն իւր փառազարդ հանդերձից մէջ, կրելով իւր անգին ցցունազարդ գլխադիրն։

Շահն՝ սիրով ընդունած է պատանւոյն երախայրիքը. եւ հրաման տալով զգուշութեամբ տանել 'ի Պարսս՝ իւր դահլիճին 'ի զարդ, հաճեցաւ եւս յորդորական խօսքեր ուղղել ասպետ պատանւոյն (Chevalier de l'ordre du Lion et du Soleil) իւր ապագայ փայլուն ասպարիզին նկատմամբ։

1. Մարքն կ'արժէ 1 ֆրանք և 25 սանթիմ։

digitised by A.R.A.R.@